

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետազոծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝  
անդամ պետություններ՝

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի  
մայիսի 29-ի պայմանագրի եւ «Եվրասիական տնտեսական միության մաքսային  
օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի վրա,

ընդունելով Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն)  
շրջանակներում տնտեսական ինտեգրման զարգացման անհրաժեշտությունը,

ձգտելով ընդլայնել ժամանակակից տեխնիկական եւ տեխնոլոգիական  
լուծումների օգտագործումն անդամ պետությունների տարածքներով  
փոխադրումները կազմակերպելիս, ինչպես նաեւ նվազեցնել Միության մաքսային  
տարածքով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսային միջոցների եւ  
պետական հսկողության այլ տեսակների կիրառումը,

ցանկանալով ապահովել ապրանքների օրինական շրջանառությունը  
Միության ներքին շուկայում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

#### Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ,  
որոնք ունեն հետեւյալ նշանակությունը՝

**նավիգացիոն կապարակնիքի ակտիվացում՝** դրված նավիգացիոն  
կապարակնիքն ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում

հսկողության կանգնեցնելը եւ հետագծման օբյեկտի նկատմամբ դիտարկման սկիզբը.

**նավիզացիոն կապարակնիքի ապակտիվացում՝** դրված նավիզացիոն կապարակնիքն ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում հսկողությունից հանելը եւ հետագծման օբյեկտի նկատմամբ դիտարկման ավարտը.

**նավիզացիոն կապարակնիքի կապարակնքման տարրի միակցում՝** ազգային օպերատորի տեղեկատվական համակարգի հնարավորությունների օգտագործմամբ նավիզացիոն կապարակնիքի կապարակնքման տարրի ամբողջականության հսկողության համակարգի միացում, որը կարող է իրականացվել ինչպես հեռավար, այնպես էլ հատուկ սարքի օգտագործմամբ.

**հսկող մարմին՝** անդամ պետության պետական մարմին (կազմակերպություն), որի գործառույթների մեջ է մտնում պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

**հետագծման օբյեկտի նկատմամբ դիտարկում՝** տեղեկատվության ընդունման եւ մշակման գործընթաց (ներառյալ արտակարգ իրավիճակների եւ (կամ) չարտոնված գործողությունների մասին տեղեկատվությունը), որն ստանում են նավիզացիոն կապարակնիքից.

**նավիզացիոն կապարակնիք՝** տեխնիկական սարքավորում, որը կազմված է կապարակնքման տարրից եւ էլեկտրոնային բլոկից, աշխատում է նավիզացիոն արբանյակային համակարգերի տեխնոլոգիաների հիմքով եւ ապահովում է հետագծման օբյեկտին առնչվող տեղեկատվության փոխանցումը.

**նավիզացիոն կապարակնիք դնելը՝** գործընթաց, որը ներառում է դռների փակման հարմարանքների ու այն տրանսպորտային միջոցի (բեռնարկղի) բեռնային զետեղարաններում (հատվածամասերում) փակման համակարգերի վրա, որոնցում գտնվում են հետագծման օբյեկտները, կամ տրանսպորտային

միջոցի այլ հատվածի (հաշվի առնելով տրանսպորտային միջոցի տեսակների եւ փոխադրման տեխնոլոգիայի առանձնահատկությունները), կամ հենց հետագծման օբյեկտի վրա նավիգացիոն կապարակնիքը ֆիզիկապես դնելը եւ կապարակնքման տարրի միակցումը.

**ազգային օպերատոր՝** անդամ պետության իրավաբանական անձ, որը, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որոշվել է որպես նավիգացիոն կապարակնիքների օգտագործմամբ օբյեկտների փոխադրումների հետագծումն ապահովող ազգային օպերատոր.

**հետագծման օբյեկտ՝** ապրանքներ (արտադրանք), տրանսպորտային միջոցներ.

**փոխադրման հետագծում՝** գործընթաց, որը ներառում է նավիգացիոն կապարակնիքի ակտիվացումը, հետագծման օբյեկտի նկատմամբ դիտարկումը, նավիգացիոն կապարակնիքի ապասկտիվացումը եւ այն տվյալների փոխանցումը, որոնք ստացվել են հետագծման օբյեկտի նկատմամբ դիտարկման ընթացքում.

**նավիգացիոն կապարակնիքի կապարակնքման տարրի անջատում՝** ազգային օպերատորի տեղեկատվական համակարգի հնարավորությունների օգտագործմամբ՝ նավիգացիոն կապարակնիքի կապարակնքման տարրի ամբողջականության հսկողության համակարգի անջատում, որը կարող է իրականացվել ինչպես հեռավար, այնպես էլ հատուկ սարքի օգտագործմամբ.

**նավիգացիոն կապարակնիքի հանում՝** գործընթաց, որը ներառում է նավիգացիոն կապարակնիքի կապարակնքման տարրի անջատումը եւ դրա՝ դռների փակման հարմարանքների ու այն տրանսպորտային միջոցի (բեռնարկի) բեռնային զետեղարանների (հատվածամասերի) կամ տրանսպորտային միջոցի այլ հատվածի (հաշվի առնելով տրանսպորտային միջոցի տեսակի առանձնահատկությունները եւ փոխադրման տեխնոլոգիաները) փակման հարմարանքների վրայից կամ հենց հետագծման օբյեկտի վրայից ֆիզիկական հանումը, որոնցում գտնվում են հետագծման օբյեկտները:

Սույն համաձայնագրում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված նշանակություններով:

## Հոդված 2

1. Սույն համաձայնագրով սահմանվում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներով հետազոծման օբյեկտների փոխադրումների հետազոծման համար (այսուհետ՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետազոծում) Միությունում նավիգացիոն կապարակնիքների կիրառման կարգավորման հիմքերը եւ այդ հետազոծման իրականացումը կազմակերպելու մեխանիզմը:

2. Սույն համաձայնագրի դրույթները կիրառվում են հետեւյալ փոխադրումների հետազոծման նկատմամբ, որոնք՝

սկսվել են մեկ անդամ պետության տարածքում եւ ավարտվում են մյուս անդամ պետության տարածքում.

սկսվել են մեկ անդամ պետության տարածքում, իրականացվում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում եւ ավարտվում են այն անդամ պետության տարածքում, որտեղից դրանք սկսվել են.

սկսվել են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, իրականացվում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում եւ ավարտվում են անդամ պետություններից մեկի տարածքում.

սկսվել են մեկ անդամ պետության տարածքում, իրականացվում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում եւ ավարտվում են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս.

սկսվել են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս,

իրականացվում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում եւ ավարտվում են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

3. Սույն համաձայնագրի դրույթները կարող են կիրառվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանվող այլ խնդիրների լուծման ժամանակ:

4. Փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների օգտագործման ժամանակ անդամ պետությունների տարածքներով հետագծման օբյեկտների փոխադրման ընթացքում մաքսային եւ պետական հսկողության այլ ձեւերը, ինչպես նաեւ այդպիսի հսկողության անցկացումն ապահովող միջոցները կիրառվում են ըստ հսկող մարմնի որոշման՝ այն դեպքերում, որոնք սահմանված են՝ ելնելով այդպիսի ձեւերի եւ միջոցների ընտրողականության սկզբունքից, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգի օգտագործմամբ՝ տրանսպորտային միջոցների բեռնային զետեղարանների պարունակության զննումը (տեսազննումը) նվազեցնելու նպատակներով:

Ընդ որում, նավիգացիոն կապարակնիքների օգտագործման հետ միաժամանակ մաքսային ուղեկցում չի թույլատրվում՝ բացառությամբ ստորեւ նշվածների փոխադրման հետագծելիության դեպքերի՝

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) 2203 00, 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ապրանքային դիրքերում դասակարգվող ալկոհոլային արտադրանք, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2401, 2402, 2403 ապրանքային դիրքերում դասակարգվող ծխախոտ, ծխախոտային արտադրանք.

ապրանքներ, որոնց նկատմամբ մեկ կամ մի քանի անդամ պետությունների կողմից կիրառվում են հատուկ տնտեսական միջոցներ.

ապրանքներ, որոնց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման մասով պարտավորությունների կատարման ապահովման չափը գերազանցում է 500 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը:

Փոխադրումների հետագծման ժամանակ ստացվող տեղեկատվությունն օգտագործվում է մաքսային եւ այլ հսկող մարմինների կողմից հսկողության միջոցների նվազեցման նպատակով:

Նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ անդամ պետությունների տարածքներով սույն համաձայնագրին համապատասխան փոխադրվող ապրանքների (արտադրանքի) նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) անցկացնելու մշտադիտարկման նպատակով հսկող մարմինների միջեւ՝ փոխադրման ընթացքում ձեռնարկված հսկողության միջոցների եւ ձեւերի մասին տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

### Հոդված 3

1. Միությունում նավիգացիոն կապարակնիքները կիրառվում են սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ հետագծման հետեւյալ օբյեկտները հետագծելու համար՝

1) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ավտոմոբիլային եւ (կամ) երկաթուղային տրանսպորտի տեսակներով փոխադրվող ապրանքներ.

2) ապրանքներ, որոնց նկատմամբ մեկ կամ մի քանի անդամ պետությունների կողմից կիրառվում են հատուկ տնտեսական միջոցներ (Միության մաքսային տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան արտահանվող, ինչպես նաեւ փոխադարձ առետրի շրջանակներում անդամ պետությունների միջեւ տեղափոխվող), փոխադրվում են ավտոմոբիլային եւ (կամ) երկաթուղային տրանսպորտի տեսակներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումները չեն իրականացվում այն անդամ պետության տարածքով, որի կողմից կիրառվում են նշված հատուկ տնտեսական միջոցները.

3) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) 2203 00, 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ապրանքային դիրքերում դասակարգվող ալկոհոլային արտադրանք, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2401, 2402, 2403 ապրանքային դիրքերում դասակարգվող ծխախոտ, ծխախոտային արտադրանք, որոնք արտահանվում են Միության մաքսային տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան կամ փոխադարձ առետրի շրջանակներում անդամ պետությունների միջև տեղափոխվում են ավտոմոբիլային եւ (կամ) երկաթուղային տրանսպորտի տեսակներով.

4) Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ ավտոմոբիլային եւ (կամ) երկաթուղային տրանսպորտի տեսակներով փոխադրվող հետագծման այլ օբյեկտներ:

2. Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել՝

1) ապրանքներ եւ (կամ) ապրանքների կատեգորիաներ, դեպքեր եւ (կամ) պայմաններ, երբ ապրանքների փոխադրումը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ենթակա չէ հետագծման՝ նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ.

2) դեպքեր, երբ նավիգացիոն կապարակնիքները կիրառվում են սույն հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված հետագծման օբյեկտների հետագծման համար՝ դրանց՝ այդ ենթակետերում նշված տրանսպորտի տեսակներից տարբերվող տրանսպորտի այլ տեսակներով իրականացվող փոխադրումների դեպքում.

3) հետագծման օբյեկտը նավիգացիոն կապարակնիքների անհրաժեշտ քանակով ապահովելու համար պատասխանատու անձինք (այդ թվում՝ կախված հետագծման օբյեկտներից կամ այն տրանսպորտի տեսակներից, որոնցով դրանք

փոխադրվում են)։

4) անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման պայմանները եւ (կամ) հսկող մարմինների կողմից այդպիսի հետագծման արդյունքների օգտագործումը։

3. Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված հետագծման օբյեկտների փոխադրումների հետագծումն ապահովելու նպատակով այն անդամ պետությունները, որոնց կողմից կիրառվում են հատուկ տնտեսական միջոցները, Հանձնաժողովին են տրամադրում հետագծման այդպիսի օբյեկտների մասին տեղեկատվությունը։

Հանձնաժողովն այդպիսի տեղեկատվությունն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ ապահովում է Միության պաշտոնական կայքում դրա տեղադրումը ռեեստրի տեսքով։ Ռեեստրի ձեւը, անդամ պետությունների կողմից այն ապրանքների մասին տեղեկատվության կազմը եւ ներկայացնելու կարգը, որոնց նկատմամբ անդամ պետությունների կողմից կիրառվում են հատուկ տնտեսական միջոցները, սահմանվում են Հանձնաժողովի կողմից։

#### Հոդված 4

1. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումն ապահովվում է ազգային օպերատորների կողմից՝ տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ։

2. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման ապահովման մասով գործառույթները կարող են վերապահվել անդամ պետությունների պետական մարմիններին (կազմակերպություններին)։ Այս դեպքում սույն համաձայնագրի՝ ազգային օպերատորներին վերաբերող դրույթները տարածվում են այդպիսի պետական մարմինների (կազմակերպությունների) վրա։



3. Անդամ պետությունը սահմանում է ազգային օպերատորին կամ անդամ պետության գործադիր իշխանության մարմինն (այսուհետ՝ լիազորված օպերատոր (մարմին)), որը լիազորված է այդ պետության հսկող մարմինների եւ լիազորված օպերատորների (մարմինների) հետ փոխգործակցության համար, եւ դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

Հանձնաժողովն այդպիսի տեղեկատվությունն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է անդամ պետություններին:

4. Անդամ պետությունում ազգային օպերատորների եւ այդ անդամ պետության լիազորված օպերատորի (մարմնի) միջեւ փոխգործակցության իրականացման կարգը, ինչպես նաեւ այն տեղեկությունների կազմը, որոնցով նրանք փոխանակվում են, սահմանվում են տվյալ անդամ պետության սահմանադրությամբ՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները:

## Հոդված 5

1. Ազգային օպերատորն ապահովում է անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվող՝ տեղեկատվական համակարգի աշխատանքը՝ մշտական հիմունքներով՝ շաբաթը 7 օր, օրական 24 ժամվա ընթացքում:

Նշված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ազգային օպերատորը կրում է պատասխանատվություն՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ այն սահմանվել է որպես ազգային օպերատոր:

2. Ազգային օպերատորների՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվող տեղեկատվական համակարգերով պետք է ապահովվեն՝

փոխադրման եզակի համարի ձեւավորումը,

նավիգացիոն կապարակնիքից՝ դրա վիճակի եւ գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատների մասին տեղեկատվության ստացումն ու մշակումը,

անդամ պետությունների տարածքներով յուրաքանչյուր հետազոծվող փոխադրման մասին այդպիսի փոխադրմանը վերաբերող՝ Հանձնաժողովի կողմից սահմանված տեղեկությունների (այդ թվում՝ նավիգացիոն կապարակնիքի ակտիվացման ու ապաստիվացման փաստերի վերաբերյալ տեղեկությունները), ինչպես նաեւ նավիգացիոն կապարակնիքից ստացված եւ տեղեկատվական համակարգի կողմից մշակված տեղեկատվության հաշվառումն ու պահպանումը,

այն լիազորված օպերատորի (մարմնի) տեղեկատվական համակարգի հետ տեղեկատվական փոխգործակցությունը, որի տարածքում գործունեություն է իրականացնում ազգային օպերատորը, եւ իրական ժամանակի ռեժիմում դրա տեղեկատվական համակարգին այն տեղեկությունների փոխանցումը, որոնք սահմանված են սույն համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան (այն դեպքում, երբ անդամ պետությունում ազգային օպերատորը եւ լիազորված օպերատորը (մարմինը) տարբեր անձինք են)։

այն անդամ պետության լիազորված օպերատորի (մարմնի) տեղեկատվական համակարգ իրական ժամանակի ռեժիմում Հանձնաժողովի կողմից սույն համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված տեղեկությունների փոխանցումը, որի տարածքով կփոխադրվեն (փոխադրվում են) հետազոծման օբյեկտները (այն դեպքում, երբ անդամ պետությունում ազգային օպերատորը եւ լիազորված օպերատորը (մարմինը) նույն անձն են)։

մյուս անդամ պետությունների լիազորված օպերատորների (մարմինների) տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցությունը (այն դեպքում, երբ անդամ պետությունում ազգային օպերատորը եւ լիազորված

օպերատորը (մարմինը) նույն անձն են),

իրական ժամանակի ռեժիմում այն անդամ պետության հսկող մարմինների տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցությունը, որի տարածքում գործունեություն է իրականացնում ազգային օպերատորը (այն դեպքում, երբ անդամ պետությունում ազգային օպերատորը եւ լիազորված օպերատորը (մարմինը) նույն անձն են):

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել ազգային օպերատորների տեղեկատվական համակարգերին ներկայացվող լրացուցիչ պահանջներ, այդ թվում՝ դրանց տեղեկատվական անվտանգության մասով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի չորրորդ պարբերության մեջ նշված տեղեկությունները եւ տեղեկատվությունը պահվում են 3 տարուց ոչ պակաս կամ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված՝ ավելի տեսական ժամկետի ընթացքում: Պահպանման նշված ժամկետը հաշվարկվում է կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակ օգտագործված՝ նավիգացիոն կապարակնիքի ապասկտիվացման օրվան հաջորդող օրվանից:

## Հոդված 6

1. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող պահանջները բավարարող նավիգացիոն կապարակնիքներ:

2. Անդամ պետությունների ազգային օպերատորների տեղեկատվական համակարգերում գրանցված նավիգացիոն կապարակնիքները կարող են կիրառվել բոլոր անդամ պետությունների տարածքներում՝ անկախ նրանից, թե որ անդամ պետության ազգային օպերատորը պետք է իրականացնի փոխադրման հետագծումը:

3. Անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետագծման համար օգտագործվող նավիգացիոն կապարակնիքների քանակը որոշվում է՝

Ելնելով այն տրանսպորտային միջոցի (բեռնարկղի) բեռնային զետեղարանների (հատվածամասերի) քանակից եւ (կամ) կառուցվածքային առանձնահատկություններից, որոնցում գտնվում են հետագծման օբյեկտները, կամ ելնելով հետագծման օբյեկտներից, եթե դրանք դրվում են անմիջապես այդ օբյեկտների վրա:

4. Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան՝ նավիգացիոն կապարակնիքները կարող են օգտագործվել հսկող մարմինների կողմից հետագծման օբյեկտները կամ այն տրանսպորտային միջոցի (բեռնարկղի) բեռնային զետեղարանները (հատվածամասերը) նույնականացնելու նպատակով, որոնցում գտնվում են հետագծման օբյեկտները՝ դրանց տրանսպորտային միջոցի (բեռնարկղի) կապարակնիքված բեռնային զետեղարաններից (հատվածամասերից) հանելը կամ այդպիսի բեռնային զետեղարաններում (հատվածամասերում) դնելը չթույլատրելու համար՝ առանց դրանք բացելու տեսանելի հետքեր թողնելու:

## Հոդված 7

1. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար օգտագործվող նավիգացիոն կապարակնիքը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

նավիգացիոն կապարակնիքի եզակի նույնականացման համարը,

այն ազգային օպերատորի մասին տեղեկատվությունը, որի տեղեկատվական համակարգում այն գրանցված է:

2. Կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակահատվածի համար նավիգացիոն կապարակնիքը պետք է պարունակի՝

այն ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում ձեւավորված փոխադրման եզակի համարը, որը, սույն համաձայնագրի 9-րդ հոդվածին

համապատասխան, իրականացնում է փոխադրման հետագծումը.

տարանցման հայտարարագրի գրանցման համարը («մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների համար), ապրանքների հայտարարագրի գրանցման համարը (մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների համար) կամ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի համարը (համարները) (անդամ պետությունների փոխադարձ առեւտրի շրջանակներում Միության ապրանքների փոխադրման ժամանակ).

մաքսային հայտարարագրից տեղեկությունները (դրա առկայության դեպքում).

միջազգային փոխադրման ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության անցկացման մասին տեղեկատվությունը՝ ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, ինչպես նաեւ դրա անցկացման արդյունքներով ձեւակերպված էլեկտրոնային փաստաթղթերը՝ ներառյալ մաքսային հսկողության անցկացման ժամանակ ստացված նկարները՝ օգտագործելով տեսչական զննման համալիրը (առկայության դեպքում), եւ մաքսային զննման ակտերը (առկայության դեպքում).

ապրանքների փոխադրումն ուղեկցող էլեկտրոնային փաստաթղթերը (տեղեկությունները) (մաքսային հայտարարագիրը (առկայության դեպքում), տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը, հաշիվ-ապրանքագիրը, տրանսպորտային միջոցի (քարշակի եւ կցորդի) գրանցման վկայականը.

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան արգելքների եւ սահմանափակումների կատարումը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերը (տեղեկությունները):

3. Պայմանավորված նավիգացիոն կապարակնիքի կիրառման նպատակներով եւ այն տրանսպորտի տեսակով, որոնցով փոխադրվում են հետագծման օբյեկտները, Հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել այլ էլեկտրոնային փաստաթղթեր (տեղեկություններ), որոնք պետք է պարունակի

նավիզացիոն կապարակնիքը՝ կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակահատվածի համար:

4. Հանձնաժողովը սահմանում է՝

փոխադրման եզակի համարի կառուցվածքը եւ էլեկտրոնային փաստաթղթերի եւ (կամ) փաստաթղթերից այն տեղեկությունների պահպանումը կազմակերպելուն ներկայացվող պահանջները, որոնք պարունակվում են նավիզացիոն կապարակնիքում՝ կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակահատվածի համար.

էլեկտրոնային փաստաթղթերից տեղեկությունների եւ (կամ) սույն հոդվածի 2-րդ կետի հինգերորդ, վեցերորդ պարբերությունների (բացառությամբ մաքսային հայտարարագրի) եւ յոթերորդ պարբերության մեջ նշված եւ (կամ) սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված փաստաթղթերից տեղեկությունների կազմը.

էլեկտրոնային փաստաթղթերի եւ (կամ) սույն հոդվածի 2-րդ կետի հինգերորդ, վեցերորդ (բացառությամբ մաքսային հայտարարագրի) եւ յոթերորդ պարբերությունների մեջ նշված եւ (կամ) սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված փաստաթղթերից տեղեկությունների կառուցվածքներն ու ձեւաչափերը.

նավիզացիոն կապարակնիքում պարունակվող տեղեկատվության պաշտպանության միասնական միջոցները:

## Հոդված 8

1. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար օգտագործվող նավիզացիոն կապարակնիքները դրվում են եւ հանվում են Միության մաքսային տարածքում, ինչպես նաեւ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

Միության մաքսային տարածքում նավիգացիոն կապարակնիքները դնելու եւ հանելու տեղերը, նավիգացիոն կապարակնիքները դնող (հանող) եւ դնելուն (հանելուն) ներկա գտնվող անձինք, Միության մաքսային տարածքում նավիգացիոն կապարակնիքներ դնելուն (հանելուն) առնչվող գործողությունները եւ դրանց կատարման կարգը՝ ներառյալ սույն համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետում նշված եւ (կամ) 7-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված փաստաթղթերի (տեղեկությունների) փոխանցման, այդպիսի փաստաթղթերի (տեղեկությունների) պահպանման կարգը, ինչպես նաեւ նախկինում գրառված տեղեկատվությունը վերացնելու (ջնջելու) կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից կամ անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

2. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կարող են կիրառվել Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրված նավիգացիոն կապարակնիքները, որոնք գրանցված են ազգային օպերատորների տեղեկատվական համակարգերում եւ բավարարում են սույն համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջները:

3. Մեկ նավիգացիոն կապարակնիքն օգտագործվում է անդամ պետությունների տարածքներով հետագծման օբյեկտի նկատմամբ դրա ընթացուղու (փոխադրման) ամբողջ ընթացքում՝ մինչեւ անդամ պետություններից մեկի տարածքում մատակարարման վայրը (սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդից չորրորդ պարբերությունների մեջ նշված փոխադրումների դեպքում) կամ մինչեւ Միության մաքսային տարածքից հետագծման օբյեկտի արտահանման վայրը (սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի հինգերորդ եւ վեցերորդ պարբերությունների մեջ նշված փոխադրումների դեպքում):

4. Նավիգացիոն կապարակնիքի ակտիվացումը եւ ապասկտիվացումն իրականացվում են ազգային օպերատորի կողմից, իսկ այն դեպքում, երբ նավիգացիոն կապարակնիքը կիրառվում է հսկող մարմնի որոշմամբ՝ այդ հսկող

մարմնի թույլտվությամբ:

Եթե անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար օգտագործվում է անդամ պետությունից տարբեր՝ այլ անդամ պետության ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում գրանցված նավիգացիոն կապարակնիքը, որի տարածքում սկսվում է այդպիսի փոխադրման հետագծումը, ապա հսկող մարմինների ու ազգային օպերատորների՝ նավիգացիոն կապարակնիքի ակտիվացման ու ապասկտիվացման համար անհրաժեշտ գործողությունները եւ դրանց կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

#### Հոդված 9

1. Հետագծման օբյեկտների ընթացուղու (փոխադրման) ամբողջ ընթացքում անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումն իրականացնում է այն անդամ պետության ազգային օպերատորը, որի տարածքում սկսվում է այդ հետագծումը (այսուհետ՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումը հետագծող ազգային օպերատոր):

2. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումը հետագծող ազգային օպերատորի կողմից անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումն ապահովելու համար, այն դեպքում, երբ անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետագծման համար օգտագործվում է այլ անդամ պետության ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում գրանցված նավիգացիոն կապարակնիքը, օգտագործվում է ծրագրաապարատային լրակազմ, որն ապահովում է նշված ազգային օպերատորի տեղեկատվական համակարգի նավիգացիոն կապարակնիքի ակտիվացման ու ապասկտիվացման հնարավորությունը եւ այդ նավիգացիոն կապարակնիքից ստացվող տեղեկատվության երթուղումն իր տեղեկատվական համակարգ, իսկ եթե դա սահմանված է Հանձնաժողովի կողմից՝ նաեւ այդպիսի տեղեկատվության



երթուղումը դեպի լիազորված օպերատորների (մարմինների) տեղեկատվական համակարգեր:

3. Այն անդամ պետության լիազորված օպերատորը (մարմինը), որի ազգային օպերատորն իրականացնում է անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետազոծումը, եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի կողմից, պարտավոր է իրական ժամանակի ռեժիմում մյուս այն անդամ պետությունների լիազորված օպերատորներին (մարմիններին) ներկայացնել սույն համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված տեղեկությունները, որոնց տարածքներով կփոխադրվեն (փոխադրվում են) հետազոծման օբյեկտները:

4. Այն անդամ պետությունների լիազորված օպերատորները (մարմինները), որոնց տարածքներով փոխադրվելու են (փոխադրվում են) հետազոծման օբյեկտները, իրականացնում են այդպիսի փոխադրման մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը (ներառյալ իր անդամ պետության հսկող մարմիններին տեղեկատվության փոխանցումը) եւ այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են իր անդամ պետության տարածքով դրա հետազոծման ապահովելու համար՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ստացված տեղեկությունների հիման վրա:

#### Հոդված 10

1. Նավիգացիոն կապարակնիքը կարող է հանվել անդամ պետությունների տարածքներով ընթացուղու (փոխադրվելու) ժամանակ՝ առանց հետազոծման օբյեկտի նկատմամբ դիտարկումը դադարեցնելու՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում:

2. Հետազոծման օբյեկտի նկատմամբ առանց դիտարկումը դադարեցնելու անդամ պետությունների տարածքներով ընթացուղում (փոխադրման ժամանակ) նավիգացիոն կապարակնիքները հանելու եւ դրա՝ հետագայում դնելու մասով

գործողությունները, ազգային օպերատորների, լիազորված օպերատորների (մարմինների) ու դրանց հանելու գործընթացում ընդգրկված հսկող մարմինների գործողությունները եւ դրանց կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. Այն դեպքերում, երբ թույլատրվում է անդամ պետությունների տարածքներով հետազոծման օբյեկտի ընթացուղում (փոխադրման ժամանակ) նավիգացիոն կապարակնիքի փոխարինումը, նավիգացիոն կապարակնիքի փոխարինման գործողությունները, ազգային օպերատորների, լիազորված օպերատորների (մարմինների) ու այդպիսի փոխարինման գործում ընդգրկված հսկող մարմինների գործողությունները եւ դրանց կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

#### Հոդված 11

1. Անդամ պետությունների տարածքներով ընթացուղում (փոխադրման ժամանակ) ծագած եւ արտակարգ իրավիճակներին դասվող դեպքերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

2. Անդամ պետությունների տարածքներով ընթացուղում (փոխադրման ժամանակ) չարտոնված գործողություն է նավիգացիոն կապարակնիքը հանելը, որի ժամանակ կապարակնիքման տարրի անջատումը տեղի է ունեցել առանց ազգային օպերատորի այն տեղեկատվական համակարգի հնարավորություններն օգտագործելու, որտեղ այն գրանցված է, կամ սույն համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված՝ նավիգացիոն կապարակնիքը հանելու գործողությունների կատարման կարգի խախտմամբ՝ առանց հետազոծման օբյեկտի դիտարկումը ընթացուղում (փոխադրման ժամանակ) դադարեցնելու:

3. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումը հետազոծող ազգային օպերատորի գործողություններն արտակարգ իրավիճակի առաջացման

Եւ (կամ) չարտոնված գործողությունների իրականացման ժամանակ, մյուս անդամ պետությունների այն ազգային օպերատորների, լիազորված օպերատորների (մարմինների) գործողությունները, որոնց փոխանցվել է արտակարգ իրավիճակի առաջացման եւ (կամ) չարտոնված գործողությունների իրականացման մասին տեղեկատվությունը, հսկող մարմինների գործողությունները՝ իրենց կողմից համապատասխան տեղեկատվությունն ստանալու դեպքում, եւ դրանց կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

## Հոդված 12

1. Լիազորված օպերատորների (մարմինների) միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

2. Հանձնաժողովը սահմանում է՝

այն տեղեկությունները, որոնցով փոխանակվում են լիազորված օպերատորները (մարմինները) յուրաքանչյուր հետազօծվող փոխադրման վերաբերյալ.

լիազորված օպերատորների (մարմինների) միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգը, այդ թվում՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նավիգացիոն կապարակնիքների ակտիվացման եւ ապասկտիվացման ժամանակ, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակի առաջացման եւ (կամ) չարտոնված գործողության իրականացման, ընթացողում (փոխադրման ժամանակ) նավիգացիոն կապարակնիքների փոխարինման կամ հանման ժամանակ.

ընդհանուր գործընթացի իրագործման կանոնները եւ լիազորված օպերատորների (մարմինների) միջեւ տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերը:

### Հոդված 13

1. Անդամ պետության հսկող մարմինների եւ այդ պետության լիազորված օպերատորի (մարմնի) միջեւ փոխգործակցության շրջանակներում՝

լիազորված օպերատորը (մարմինը) ապահովում է իր անդամ պետության հսկող մարմիններին իր տեղեկատվական համակարգին հասանելիության տրամադրումը.

լիազորված օպերատորը (մարմինը) իր անդամ պետության հսկող մարմինն տեղեկացնում է այդ պետության օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների մասին, այդ թվում՝ հետազոտման օբյեկտի մասին, արտակարգ իրավիճակի առաջացման եւ (կամ) չարտոնված գործողության իրականացման մասին:

2. Անդամ պետության հսկող մարմինների եւ այդ պետության լիազորված օպերատորի (մարմնի) միջեւ փոխգործակցության (ներառյալ տեղեկատվական փոխգործակցությունը) կարգը, այդ թվում՝ սույն համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում նավիզացիոն կապարակնիքների ակտիվացման եւ ապասկտիվացման, արտակարգ իրավիճակի առաջացման եւ (կամ) չարտոնված գործողությունների իրականացման, ընթացուղում (փոխադրման ժամանակ) նավիզացիոն կապարակնիքների փոխարինման կամ հանման ժամանակ, ինչպես նաեւ այն տեղեկությունների կազմը, որոնցով փոխանակվում են լիազորված օպերատորը (մարմինը) եւ հսկող մարմինները, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել այն հսկող մարմինների՝ իր անդամ պետության ազգային օպերատորների հետ փոխգործակցության կարգը, որոնք լիազորված օպերատորներ (մարմիններ) չեն:

#### Հոդված 14

Հսկող մարմինների միջպետական տեղեկատվական փոխգործակցությունն այն հետազոծման օբյեկտների առնչությամբ, որոնց փոխադրումը հետազոծվում է սույն համաձայնագրին համապատասխան, իրականացվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

#### Հոդված 15

Անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետազոծումն իրականացնող ազգային օպերատորը նավիգացիոն կապարակնիքների հետազոծման օբյեկտի ապահովման համար պատասխանատու անձանց տեղեկացնում է իր տեղեկատվական համակարգում պարունակվող՝ փոխադրման հետազոծման մասին:

Ազգային օպերատորի կողմից նավիգացիոն կապարակնիքների հետազոծման օբյեկտի ապահովման համար պատասխանատու անձին տրամադրվող տեղեկությունների կազմը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի ազգային օպերատորն ապահովում է փոխադրման հետազոծումը:

#### Հոդված 16

1. Ազգային օպերատորի ծառայությունների գները (սակագները) (նավիգացիոն կապարակնիքներ դնելը (հանելը), անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետազոծման ապահովումը, տեղեկատվության տրամադրումը, հետազոծման օբյեկտին՝ նավիգացիոն կապարակնիքների անհրաժեշտ քանակությամբ ապահովումը, Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ ծառայություններ) սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ սահմանվել է այդպիսի ազգային օպերատորը: Ազգային օպերատորի

ծառայությունների գները (սակագները) պետք է լինեն տնտեսապես հիմնավորված:

Ազգային օպերատորների կողմից անդամ պետությունների տարածքներում հակամենաշնորհային օրենսդրության խախտումների կանխումն իրականացվում է անդամ պետությունների պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից:

2. Ազգային օպերատորների միջև փոխհարաբերությունները, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետագծումն իրականացնող ազգային օպերատորից տարբերվող այլ ազգային օպերատորի տեղեկատվական համակարգում գրանցված նավիգացիոն կապարակնիքների փոխադրումը հետագծելու համար օգտագործելիս եւ այդպիսի օգտագործման ժամանակ ծախսերը փոխհատուցելիս, կարգավորվում են ազգային օպերատորների միջև պայմանագրային հարաբերություններով:

## Հոդված 17

1. Նախքան ծրագրաապարատային համալիրը ստեղծելը եւ գործողության մեջ դնելը՝ սույն համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի իրագործումն ապահովվում է ազգային օպերատորների մասնակցությամբ լիազորված օպերատորների (մարմինների) կողմից ընդունվող՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների իրագործման միջոցով՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

2. Մինչեւ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ լիազորված օպերատորների (մարմինների) միջև տեղեկությունների փոխանակումն ապահովող Միության շրջանակներում ընդհանուր գործընթացը գործողության մեջ դնելու մասին Հանձնաժողովի ակտն ուժի մեջ մտնելը լիազորված օպերատորների (մարմինների) միջև տեղեկատվական փոխգործակցությունն ապահովվում է ազգային օպերատորների մասնակցությամբ լիազորված օպերատորների (մարմինների) կողմից ընդունված

ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների իրագործման միջոցով՝ ելնելով այն պահանջներից, որոնք, սույն համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններին համապատասխան, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

## Հոդված 18

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 180 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովն ապահովում է սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերով եւ 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ կետի չորրորդ պարբերությամբ, 6-րդ հոդվածի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 8-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերով, 10-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով, 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններով եւ 17-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրագործումը:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում անդամ պետություններն ապահովում են սույն համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետի իրագործումը:

3. Լիազորված օպերատորները (մարմինները) ապահովում են սույն համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների մշակումը՝ սույն համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններով եւ 17-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ Հանձնաժողովի ակտերն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում:

4. Անդամ պետությունները ծանուցում են Հանձնաժողովին սույն համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների կայացման մասին իր լիազորված օպերատորի (մարմնի) պատրաստակամության վերաբերյալ՝ իր լիազորված օպերատորից

(մարմնից) այդպիսի տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում:

5. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումը, սույն համաձայնագրին համապատասխան, կիրառության մեջ է դրվում Հանձնաժողովի այն որոշմամբ, որն ընդունվում է սույն հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված միջոցառումներն իրականացնելուց հետո, սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված ժամկետներում՝ փուլ առ փուլ, կամ Հանձնաժողովի կողմից նախատեսված ժամկետներում՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված հետագծման օբյեկտների նկատմամբ:

6. Անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումն սկսում է իրականացվել՝

1) Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող հետեյալ ապրանքների նկատմամբ (բացառությամբ նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ հետագծման ոչ ենթակա ապրանքների՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան)՝

ավտոմոբիլային եւ (կամ) երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքներ, որոնց նկատմամբ մեկ կամ մի քանի անդամ պետությունների կողմից կիրառվում են հատուկ տնտեսական միջոցներ (բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումները չեն իրականացվում անդամ պետության տարածքով, որոնց կողմից կիրառվում են նշված հատուկ տնտեսական միջոցները), ինչպես նաեւ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2203 00, 2204, 2205, 2206 00, 2207 եւ 2208 ապրանքային դիրքերում դասակարգվող ալկոհոլային արտադրանքը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2401, 2402 եւ 2403 ապրանքային դիրքերում դասակարգվող ծխախոտը, ծխախոտային արտադրանքը.



ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4303, 6101-6106, 6110, 6401-6405, 8517, 8519, 8521, 8525 - 8528 ապրանքային դիրքերում դասակարգվող՝ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքներ.

2) Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերում նշված՝ հետագծման օբյեկտների նկատմամբ.

3) Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված ապրանքներից տարբերվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքների նկատմամբ (բացառությամբ նավիզացիոն կապարակնիքների կիրառմամբ հետագծման ոչ ենթակա ապրանքների՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան).

4) Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան երկաթուղային տրանսպորտով փոխադրվող այն ապրանքների նկատմամբ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4303, 6101-6106, 6110, 6401-6405, 8517, 8519, 8521, 8525-8528 ապրանքային դիրքերում, ինչպես նաեւ Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ ապրանքների նկատմամբ.

5) Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 480 օրացուցային օրը լրանալուց հետո՝ սույն կետի 4-րդ ենթակետում նշված ապրանքներից տարբերվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների նկատմամբ (բացառությամբ նավիզացիոն կապարակնիքների կիրառմամբ հետագծման ոչ ենթակա ապրանքների՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան):

7. Անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ միակողմանի կարգով թույլատրվում է իրականացնել փոխադրումների հետագծում ստորեւ նշված օբյեկտների նկատմամբ՝

սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված հետագծման օբյեկտներ՝ սույն համաձայնագրին համապատասխան՝ մինչեւ հետագծման այնպիսի օբյեկտների փոխադրումների հետագծումն սկսելու ամսաթիվը, որոնք սահմանված են սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան.

հետագծման այլ օբյեկտներ՝ մինչեւ սույն համաձայնագրին համապատասխան հետագծման այնպիսի օբյեկտների փոխադրման հետագծումն սկսելու ամսաթիվը, որոնք սահմանված են Հանձնաժողովի կողմից սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան հետագծման այդպիսի օբյեկտները սահմանելիս, սակայն Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 480 օրացուցային օրը լրանալուց ոչ ուշ:

#### Հոդված 19

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

#### Հոդված 20

Սույն համաձայնագրի մասով վերապահումներ չեն թույլատրվում:

#### Հոդված 21

Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014

թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

### Հոդված 22

Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մաս է կազմում:

### Հոդված 23

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2022 թվականի ապրիլի «19» -ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

<b>Հայաստանի Հանրապետության կողմից՝</b>	<b>Բելառուսի Հանրապետության կողմից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետության կողմից՝</b>	<b>Ղրղզական Հանրապետության կողմից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնության կողմից՝</b>
---	---	--	--	--

Մույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022 թվականի ապրիլի 19-ին քաղաք Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետազոման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**